

ՀԱՅՐԵՆԻՓ

40 փարս

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹ

40 փարս

Այս հրատարակութիւնն արեւելի օրեր :
Տարեկանն է կանխիկ Ա. աստիճանի բաժանորդագրութեան հա-
մար մէկ ասանեան ոսկի, իսկ Բ. աստիճանի բաժանորդագրութեան
համար կէս ասանեան ոսկի, Դուրս գացածներուն ծախքը անդին :

Եւրոպական քաղաքացի համար 30 ֆրանկ :
Հատը 40 փարս :

Համակ կամ գրութեան այնք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ.
Գալստեանէն Երեւանի քաղաքը Կոմիտասի փողոցի թիւ 10-էն : Կիւղոս-
եանի Տպարանը կամ Պահէճ գարու Երասմուտ Պողոս եւ Յակոբ ա-
ղայից խանութը :

Անվեր ծրար եւ համակ կը մերժուին : Զեւարդ եւ չի տրուիր :
Խանութեան ասորը մէկ անգամի համար 3 դր. է : Եւսկի անդամ-
ներու համար սակարկութիւն կը ըլլայ :

ԹԻՒ 8

ԿԻՐԱԿԷ

1887 ՅՈՒՆԻՍ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրկնամուսնութիւնը . — Վարժա-
պետաց անպաշտ . — Սովի անթիւ . —
Պանդուխտ աղայից . — Ի Նիկոմիդիա .
— Զուարճալիք . — Քաղաքական . —
Հարցաքննութիւնք . — Մահագոյմ . — Աղջ-
կուհիք . — Վէպ (ժողովրդաւ Ընտանիքը
գրքի ձեւով) :

ԿՐԿՆԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

Շահագոյ իտրապետ է ֆէնտիի
այս օրեր կատարած կրկնամուսնու-
թեան առթիւ կը հրատարակենք
մեր Տեսութիւնը, զոր խոստացած
էինք :

Կրկնամուսնութիւնն ընդդէմ
համարէն քրիստոնէական եկեղեցւոյ
ընդդէմ քաղաքականութեան եւ ընդ-
դէմ բնականական եւ հասարակաց
բարոյականի զեղծում եւ զեղծումէ
աւելի անհրաժեշտ ոճիւր եւ զոր գործողն
պարզապէս զոյթով կը լինի :

Մի այնպիսի ծանր գայթակղու-
թիւն եւ ոչ մէկ տեսակէտով կրնայ
արդարանալ, մանաւանդ երբ կու-
գայ բարձրէն :

Բարձրէն կրնենք, զի Շահագոյ
է ֆէնտիի կառավարութեան բարձր պաշ-
տօնէայ եւ ընկերութեան մէջ փոխու-
միւրք ու համբաւ ունեցող անձնու-
թեան մ'էր, ուստի իւր պատճա-
ռած գայթակղութիւնն աւելի մեծ
է եւ արժանի ընդհանուր ուշադրու-
թեան :

Այս պատճառաւ անակնուելի
չէ որ իւր արարք մեծ յուզում
պատճառէր :

Պատիւ կրօնական Ժողովի ի հար-
կէ չէր կրնար անտարբեր գտնուիլ
եւ ի գործ չընել եկեղեցւոյ արամա-
դրութեան պատժը :

Կրնն, Ժողովը չաճապարեց սո-
կայն, միջոց տուաւ զղջալու : Ամեն
Ա. Պատրիարքն, Ամեն Եպիսկոպոս
եւ իւր — Շահագոյ է ֆէնտիի — անձ

նախն բարեկամք յորդորեցին զինք
եւ կենտր իւր ընթացքէ, բայց ո-
մէն միջոց գործադրաբար ապարդ իւն
միացին, որովհետեւ Շահագոյ է
ֆէնտի անդրադուրէն մնաց :

Որ ինքն Պատ. կրօն. Ժողովը այլ
եւս պարտաւ մը չունէր եկեղեցւոյ
տրամադրած պատժը — բանադ-
րանք — ի գործ չընելու, եւ եթէ
փարաներ, ինք պատասխանատու պի-
տի մնար առաջի եկեղեցւոյ եւ տա-
լի Աղային :

Ըսենք թէ Շահագոյ է ֆէնտիի
պատճառած գայթակղութիւնը մեծ
է, Եւսկի մեծ երաւ, իւր յամուռ-
թիւնը, որով հրաւիրեց իւր վրայ ե-
կեղեցւոյ պատժն եւ հասարակաց
զգուշանքն ու արհամարհանքը :

Շահագոյ է ֆէնտիի ինկած է բա-
րոյապէս եւ իւր այս անկման պատ-
ճառը ոչ Աղայն է ու ոչ եկեղեցին, այլ
իւր գայթակղական արարքը, իւր
յամուռութիւնը :

Շահագոյ է ֆէնտիի իւր քով օրե-
նադէտ կրնար գիտնալ թէ ինք ի-
րաւունք չունէր առանց ձեռնհաս
իշխանութեան վճարի արձակել զիւր
օրինաւոր կին, ինչպէս նաեւ ի կեն-
դանութեան Եւրա առնուլ մի այլ
կին առանց որոշման գործեալ ձեւ,
որնհաս իշխանութեան :

Արդեօք իւր օրինաւոր կին ան-
հատաւարիմ գտնուած է իւր ամուս-
նական պարտաւոր մէջ. — Ըսա՛ վե-
կայութեան նոյն իսկ Շահագոյ է ֆէն-
տիի՞ Ո՞՞ :

Եւ եթէ գտնուած իսկ լինէր —
որ չէ գտնուած — դարձեալ ինք
յինքեկէ իրաւունք չունէր տունու-
նաթողութիւն եւ կրկնամուսնութիւն
կատարելու, զի Շահագոյ է ֆէնտի
հեղինակութիւնն չէ :

Ինչ որ եկեղեցին տուած է,
կրնայ դարձեալ եկեղեցին առնուլ :

Շահագոյ է ֆէնտիի արձակելով
զիւր օրինաւոր կին առանց բաժնի —
պատճառաւորապէս թեան նորա բա-
րոյական թշուառութեանը պատճառ-
կը մատակարարէ :

Իսկ ինք ունեւոր մի այլ կին, Ե-
կեղեցւոյ օրինաց եւ հանրային բա-
րոյականի դէմ մեղանշած է :

Եթէ վերապահեալ նկատուինե-
րով րոմանած մնար իւր օրինաւոր
կնոջն առանց սակայն մի այլ կնոջ
հետ կենակցելու, Շահագոյ է ֆէնտի
ոչ ոչնչաւի մեղադրանաց արժանի
պիտի լինէր եւ ոչ ուր եկեղեցւոյ պա-
տիժն իւր վրայ պիտի հրաւիրէր, պա-
տիժ, որ բարոյական մարդու համար
մահ է :

Շահագոյ է ֆէնտիի հասարակ անձ-
նու որով իւն մը չէր, յիմար չէ, ար-
դէտ չէ, երիտաւարդ չէ նոր ամուս-
նացեալ չէ, ունի վեց զաւակ՝ հինգ
տղա, եւ մէկ աղջիկ եւ իւր օրինա-
ւոր կինն անպարկեշտ մէկը չէ :

Այս պարագաներ աւելի ծան-
րացուցիչ են իւր արդէն գործած
ծանր արարքին վրայ որ փոքր օրինակ
մ'է նոյն իւր գաւազանը համար :

Շահագոյ է ֆէնտիի նման անձէ
մը սպասուած օրինակն այս չէր :

Ոչ միայն օչնչալի :

Շահագոյ է ֆէնտիի գերագոյն ա-
տենի մը դատաւոր է :

Նոյն ոտենի առաջ գործ ունե-
ցող անձինք ի հարկէ առանց իրզօն
բեռ զղարու՝ պիտի չուղեն իւր ներ-
կայութեանը դատաւիւր կիճիւնն
գործելու :

Այս պարագայ անշուշտ օրինա-
կան պէտք է լինի, որովհետեւ խզծի
ինքիւր է, եւ որովհետեւ երթական
բանադրեալ մ'է :

Վերջապէս՝ Շահագոյ է ֆէնտիի
գործած արարքը որքան ծանր է եւ
կեղեցական, ընկերական եւ ընտա-
նական բարոյականի տեսակէտով,
հետեւութիւններն ալ նոյնքան աւե-
լի ծանր են :

Ահա այս ամեն նկատողութիւն-
ներով կը փափայ ինք որ Շահագոյ է
ֆէնտիի հրաժարի իւր յամուռու-
թեան դադարեցնել, հրաժարի կե-
նակցութեանն այն կնոջ՝ որ իւր օրին-
աւոր կինը չէ, վերջ տայ անհաճոյ

տպաւորութեանց՝ դիմելով Եկեղեցւոյ ներմանը, որով կը դադարի ամեն բան, կը բարձուի գոյնիակալութիւնը, կը ջնջուի դատապարտութիւնը և ինք կը վերստանայ զիւր դիրքը:

Մի այսպիսի դիմում իրեն համար բնաւ նուազութիւն չէ:

Շահագոյ էֆէնտի սյուս մեծ մարդու գործ կատարած կը լինի:

Սխալին ամօթ չէ, զի մարդ սխալական է. սակայն մեծ ամօթ ու յաւիտեական նախատինք է սխալելէ յետոյ յուզողութիւն չբառնալը:

Շահագոյ էֆէնտի սպասուածն վերջինը չէ:

Եթէ Շահագոյ էֆէնտի ինքնաբերաբար կատարէ զայս գործ, աշխարհ պիտի ծափահարէ զինք և վըկայէ թէ ստուգիւ մեծ մարդ է եղեր:

Իսկ եթէ յամառի դարձեալ և չուզէ հրաժարիլ իւր ընթացքէ, ոչ ոք պարկեշտ մարդ պիտի ուզէ բարեւել զինք, տեսնուիլ իւրեան հետ և զինք իւր տան մէջ ընդունիլ, որովհետեւ Շահագոյ էֆէնտի Եկեղեցիէն արտաքսեալ է բանադրանք իւր գործած ընտանեկան ամենամեծ ու աններելի յանցանքին համար:

Կր սիրենք յուսալ թէ Շահագոյ էֆէնտի պաղ արեամբ ու լըրջօրէն նկատողութեան առնելով զայս ամենածանր պարագայներ, պիտի փութայ յաղթել իւր այն կրից՝ որ զինք մոլորեցուցին, և պիտի չուզէ շարունակել իւր արդի ընթացքն, որ անպատուաբեր ու դատապարտելի է:

Բայց ի՞նչ ըսենք Աղեքսանդր Մերեճմ-Գուլի էֆէնտիին, որ հակառակ ամենայն ակնկալութեան՝ կատարած է կնքահայրութեան պաշտօն սոյն կրկնամուսնութեան առթիւ:

Անշուշտ փափագելի է որ ըստող չլինէր այս լուր, որովհետեւ ոչ նուազ ծանր պարագայ մ'է որ բնաւ ի կըրու չգար իւր համբաւոյն, գիրքին ու անուան հետ:

Ինչ գիտադրութիւնն որ մեծ մարդիկ եթէ զեղծում գործեն, փոքրը տեսակէ չեն գործեր:

Ինչպէս Շահագոյ էֆէնտիին համար ներելի չէ կրկնամուսնութիւն, նոյնպէս Մերեճմ-Գուլի էֆէնտիին համար ներելի չէ նմանօրինակ պարագայի մէջ կնքահայրութիւնը, որ ոչ նուազ գայթակղական գործ է:

ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի օր Եկեղեցեաց մէջ կարգացուած բանադրանքը ընդհանուր գոհունակութիւն պատճառած է ամեն դասակարգի անձանց, որ հաւաստաբանք կը գովեն Ամեն Ս. Պատրիարք Հօր և Պատկ. Կրօն. Ժողովոյ ընթացքն ու որոշումը:

Չկար և չկայ մէկն — գուցէ բացի Մերեճմ-Գուլի Աղեքսանդր

էֆէնտիէ — որ գիտադրութիւն զգար. ընդհակառակն՝ ամեն ոք կը բերկրէր և այս բերկրութեան ու գոհունակութեան պատճառն անշուշտ ոչ այլ ինչ է, բայց եթէ Եկեղեցւոյ շահուց և ընտանեկան ու ընկերական բարոյ. յակասի պահպանումն, ու միապէս գող լինելը գործնականապէս կը յայտնէ Հայ-Ժողովուրդը:

Կ'ըսուէր իսկ թէ պատգամաւորութիւնը կերթան առ Ամեն Ս. Պատրիարք Հայրն և առ Պատկ. Կրօն. Ժողովն շնորհակալութիւն յայտնելու իւրեանց արիական ընթացքին եւ Եկեղեցւոյ շահուց ու ընտանեկան և ընկերական բարոյականի պահպանման մասին տաժած հոգածութեանց համար:

Կը գովենք Ժողովուրդեան այս շարժումն, որ ապացոյց է թէ վառ եւ կենդանի են իւր սրտի մէջ Եկեղեցասիրութեան եւ ընտանեկան ու ընկերական բարոյականի սուրբ եւ վսեմ զգացմունքը:

Դ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ն

Մեր տեղեկութեանց համեմատ կան եղբւր տակալին ամուսնացեալ անձինք որ թողով ու լքանելով իւրեանց օրինաւոր կրկնը՝ կը կենակցին եղբր ապօրէն յարաբերութեամբ (1)

Ներքի չէ երբեք ենթադրել թէ դժբաղբեր պիտի մնան Եկեղեցւոյ արամադրած պատժէն:

Պատկ. Կրօն. Ժողովն արդէն ձեռնարկներ կ'ընէ այդ կարգի անձանց ցուցակը ձեռք բերելու, որոյ համեմատ անշուշտ ի գործ պիտի դնէ բանադրանքը:

Բայց բանադրանքէ դատ պէտք է պաշտպանել նաեւ կրկնամուսնացեալ օրինաւոր կրկնութեան իրաւունքը ապրուստի մասին, որպէս զի նոցա բարոյական թշուառութեանը վրայ չաւելնայ նաեւ նիւթակերպութեան ունիւթիւնը:

Պատրիարքարանն այս մասին եւ պարտի զիւր ազգեցութիւն ի գործ դնել:

Ժողովուրդն ալ իրաւունք եւ իրաւունքէ աւելի բարոյական պարտականութիւն մ'ունի. այն է, թոյլ չտալ որ կրկնամուսնացեալ բնակութիւն հաստատեն թաղերու մէջ ազատ համարձակ եւ իւրեանց փոտ ու եպերելի ընթացքովը գայթակղութեան օրինակ հանդիսանան:

Մեր այս դիտողութիւնն նաեւ օրինական է, որովհետեւ շնացեալ ներքի չէ պարկեշտ թաղերու մէջ բնակիլ:

Կրկնամուսնացեալք եւ կամ ա-

(1) Սարաֆեան Միհրան անուն անձ մ'ալ կրկնամուսնութեան ամբաստանութեան ենթակայ է, եւ որ Կրօն. Ժողովոյ կողմէ Պատրիարքարան կոչուեր է:

պօրէն յարաբերութեամբ կենակցողներ կը նկատուին իրրեւ չնացող քանի որ օրինաւոր ամուսնութեան վաւերացիր չունին:

ՍՈՎԻ ԱՌԹԻԻ

Այն վտանգը, զոր զգացել կուտայինք վերջին թերթի մէջ, դժբաղբար իրականութիւն կը դառնայ հետզհետէ:

Նորագոյն տեղեկութիւնք սըրտածմիկ տեսարաններ կը ներկայեն:

Թէպէտ Կոյս բարեխնամ կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնուի սովեալ դաւաճս նպարեղէն մտցնելու, և այս մասին մեր Պատրիարքարանը Բ. Դրան դիմումներ կ'ընէ, բայց այդու միայն ազգային պարտականութիւն մը կատարուած չհամարուիր, որովհետեւ ազգային ինչ ընէ որ տիրող երաշխութեան պատճառաւ հունձք վըճացած և իւր դուարը մեծապէս կորուսած ըլլալով՝ դրամ չունի որ պէտքի կարենայ իւր ընտանեաց ու զաւակաց օրապահիլը ճարել:

Բնական է ուրիմն թէ ազգատգասը չարաչար պիտի տաղնապի և դուցէ սովամահ լինի, եթէ Ազգին կողմէ անյապաղ օգնութեան միջոցներ ձեռք չառնուին:

Եւ ինչո՞ւ չառնուին, քանի որ վտանգն անարկու է և հետեւանքն աղետաբեր:

Մարդասիրական և ազգասիրական տեսակետով մեր ամենուս ալ պարտքն է առանց ազգի և կրօնի խտրութեան հաց տալ այնմ՝ որ անթի է, ջուր տալ՝ որ ծարաւի է, զգեստ հայթայթել՝ որ մերկ է և դեղ մատակարարել՝ որ հիւանդ է:

Այս կրկին պարտականութիւն չմոռնանք լուրս միանգամայն թէ քրիստոնէական է:

Ինչ, միթէ Հայու սրտին մէջ ցամքած ու մեռած են մարդասիրական, ազգասիրական և քրիստոնէական սուրբ զգացումներ:

— Ո՛չ, բնաւ ո՛չ, երբեք ոչ:

— Թո՛ղ կաշմուխ դիրք, ազգեցութիւն ունեցող և վստահութիւն ներշնչող անձերէ բաղկացեալ նպաստամատոյց Գանձաժողով մը — ինչպէս էր Սովետոյ նախագահ Խնա մող Պատ. Գանձաժողովն՝ որ նախանամական պաշտօն կատարեց — պիտի տեսնուի յայնժամ թէ Ժողովուրդն՝ հարուստ թէ միջնակարգ կամ աղքատ՝ պիտի փութայ իւր գլխով իրենց լուրս սիրով և ինքնաշարժար նուիրել յուսացուածէն աւելի փութալն եռանդեամբ, զի Հայ-Ժողովուրդն անտարբեր չէ երբեք:

Հրաւեր մը, պարզ հրաւեր մը բաւական է ցունձ տալու, միշտ ու

Ռուսական լրագրիքը խորին տագնապով հետևում էր յայտնեն Գոթոլերկի իշխանին ընտրութեան համար :

Ֆրանսա . — Խորհրդարանին մէջ Եւրոպայի ձախակողմը պարսաւեց զՆախարարութիւնը՝ միապետականաց հետ իւր համաձայնութեան համար : Նախարարական Պ. Ռուվիէ սլատաօխանեց թէ իւր քաղաքականութիւնն է հանրապետական մեծամասնութեամբ կառավարել երկիրը . « Երեսօրիսանաց ժողովը , ըսաւ , 400 հանրապետական անդամ ունի : Եթէ կէսը քուէարկէ ընդդէմ նախարարութեան , մենք կը հրաժարինք » :

Երեսօրիսանաց ժողովը 120ի դէմ 382 ձայնով ընդունեց նախարարութեան պահանջաց պարզ օրակարգը :

Կրէթէ . — Տեղւոյն կուսակալը կը հեռագրէ Բ. Դրան թէ Վ. Եմ. Մահմուտ ձեւալէտին եւ Բաղդադ փաշաներու Հանեա ժամանումը լաւ ազդեցութիւն ըրեր է ժողովուրդին վրայ եւ թէ բանակցութիւնք սկսեր են Կայս. Պատուիրակին եւ ընդհանուր ժողովոյ անդամոց միջեւ :

Արաւ . — Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ յԱտանա ներմուծելի բոլոր արմըտիք զերծ պիտի մնան մաքսային տուրքէ :

Պէրսիան Խորհրդ . — Որոշեց որ , ինչպէս առեւտրական խառն դատարանը նոյնպէս եւ հուգուզի դատարանը յետ այսորիկ մէկ կողմադիր միայն զրկեն :

Եմէ . — Այս կողմեր աւազակութիւնը բազմացեր է :

Տէրքանսիէ . — Այս կողմի հունձքերը բոլորովին բնաջինջ եղեր են . Ատա-նայէ աւելի թշուառութիւն կը տիրէ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօն. Ժողովը իւր վերջի նստին մէջ Տիգրանակերտի համար Այցելու—Հովիւ ընտրեց զԳեր. Եզնիկ եպիսկոպոս եւ իւր այս որոշում հեռագրաւ հաղորդեց նմա :

— Ատանայի երաշտութեան եւ սովին պատճառաւ Ժողովը որոշեց անմիջապէս այդ կողմերն զրկել Սոյ միաբան Վեհապետեան Գեր. Մկրտիչ եպիսկոպոսն որպէսզի տեղւոյն կուսակալին հետ միա-նալով ներկայ տաղնապի պահուն դարման տանի տեղւոյն ազգայնոց :

— Վիսնանք թէ Գատը-գիւղի բը-նակիչներէ բաղուած կը փախաքին եղեր փոխանակ Այվազեան Արժ. Եղիշէ վարդապետի՝ մի եպիսկոպոս քարոզիչ ունե-նալ եւ առ այս , ուր որ հարկ է , դիմում պիտի ընեն եղեր :

ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Պէրպէրեան բաղմարդին վարժարա-նի հարցաքննութիւնը այսօր կը վերջա-նան :

— Պէրպէրեան Գատը-գիւղի վարժարանի դրաւոր հարցաքննութիւնը աւարտած լինելով՝ բերանացի ընդհանուր հարցաքննութիւնք պիտի սկսին այս օրէ եւ պիտի տեւեն մինչ 30-իս 13 :

Մրցանակաւորութեան հանդէսն տեղի պիտի ունենայ Յուլիս 17ի կիրակի օրն ի Ս. Եկեղեցւոյ :

— Վսեմ. Ձեխէնի բաշա — աներն Տատեան Ազնուաշուք Վահրամ պէյի — անցեալ շաբաթ օր յիշեալ վարժարանն երթալով ներկայ գտնուեցաւ Անգղ. եւ Ֆրանս. դատախօսութեանց եւ քանի մը հարցումներ ուղղեց աշակերտաց որոց պատասխաններէ զոհ մնաց :

ՄԱՀԱԳՈՅԺ

Պոյաճեան Մեծ. Յովհաննէս էֆէնտիի մայրն՝ Ազնուհի տիկին Խսկուհի Պոյաճեան ի հարիւրամեայ հասակի կնքեց իւր մահկանացուն Եէնիքէյ , ուր կատարեցու յուղար-կաւորութեան հանդէսը վայելուչ շքով այս ուրբաթ օր :

Տիկին Պոյաճեան հանրածանօթ էր իւր առաքինութեամբ , ազնուա-սրտութեամբ եւ բարեկրթութեամբ :

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պաարիարքն անցեալ կիրա-կի օր Այստէֆանօ Գաբամաճեան Ազնու-աշուք Լեւոն պէյի այցելութեան գնաց եւ ցերեկուան ճաշն հոն ըրաւ . իսկ ե-րեկոյն Կիւմիւշկէրտան Ազնուաւծար Ռուքէն եւ Տիգրան էֆէնտիներու առեւը մնաց , ուր կը գտնուէր նաեւ Ամեն. Խրիմ-եան Սրբազան :

ԲԱՐՁՐ ԱՅՐԱՀԱՄ ԲԱՇԱ

Գոհութեամբ կրօնանք թէ Ն. Բարձ-րութիւն իւր հիւանդութենէ կատարեալ-պէս առողջացած է ,

ԱՐՏՕՆԱՏԷՐ Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏԵՕՐԷՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

առթի հանդիպեցաւ եւ Օռէլին լնդիւնքին բե-րաւ , որովհետեւ հայրն ու մայրն Րիչարտէ-ներուն հետ սենեակը մտան :

— Շատ ուրախացուցիք զիս , այս գիշեր մեզ դալով , սիրելի տիկին , — կըսէր տիկին Ժուֆրուա . Ձեր ծանօթները պիտի գտնէք հոս :

— Ծանօթներ , պատասխանեց տիկին Րիչարտէ , որ սրահին ռեմէն դեռ չէր կրցած նշմարել անդ գտնուող անձինքը : — Ո՛յք են այդ ծանօթներն , սիրելիս :

— Պարոն մարքիզ տը Վիլթանէօզ եւ իւր եղբորորդին :

— Ի՞նչպէս , հո՛ս են , ձեր տո՛ւնն ալ կուգան :

— Ինչո՞ւ չէ , սիրելիս , պատասխանեց տիկին Ժուֆրուա յաղթական սնապարծու-թեամբ մը ուռեցած . — տես , թէ ի՞նչ լաւ պատահեցաւ , այսօր մեծ ուրախութիւն մը ունինք , այդ ուրախութիւնը ձեզ կը պար-տիմք , եւ աոոր համար այս երեկոյ փութացինք հրաւիրել զձեզ որ մեզ գայք , որպէս զի դուք ալ մեր ցնծութեան մասնակցիք : Ըսելիքս ձեզ պիտի զտրմացնէ , սիրելիս , բայց արդէն

վստահ եմ թէ պարոն Մարքիզը պիտի բա-րեհաճի խնդիրը բացատրել :

— Աշխարհիս ամենէն աւելի ուրախա-ռիթ եւ պարզ խնդիրն է այդ , ըսաւ գլանիկն քաշելով , երէկ , եղբորդիս պատիւ ունեցաւ , տիկին , ձեր տան մէջ հանդիպել օրիորդ Օռ-էլիի , այսօր եկայ հարցնել առ պարոն եւ Տի-կին Ժուֆրուա թէ կուզե՞ն եղբորորդիս իբր փեսայ ընդունիլ , ընդունեցան , ինչպէս եւ օ-րիորդ Օռէլի , եւ տասն եւ հինգ օրէն . . . Հարուանիք :

— Այո , սիրելիս , յաւելցուց տիկին Ժուֆ-րուա , եւ ըստ որում սոյն երիտասարդները ձեր տան մէջ հանդիպեցան միմեանց , գէթ հարկէր որ առաջին անգամ ամուսնութեան լուրը դուք իմանայիք : Արդէն կրնամ այս լու-րը մեր բարեկամաց մէջ տարածել , փառք Աստուծոյ , ասի գաղտնիք մը չէ :

Րիչարտէներն յապուշ կրթեալ զիրար կը դիտէին անմուռնչ , երբ ծառայն դժգոհ գէմքով ներս մտաւ , ձեռքը նամակ մը բռնած եւ իւր տիրուհւոյն բաղկաթոռին մօտեցաւ ու

— Տիկին , նամակ մ'է այս գոր կոմսին սպասաւորը բերաւ , զինքը կտուքով փնտռելով :

— Տէսէնէ չու իքի նուսէրօյու վարօրուն իշէմէսի խայլըլը օյմուշ :
— Եվիլիթ . պախուսուս պէնիմ կիպի պու կիւնլէրտէ ույդու սէր-սէմէրինէ չօդ ետրաեօր :

ԳՈՂ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՂԱՅ ԱԶԳՅՈՒՆՏ ԸՆԿ.

ՀԱՅԱՍՏԱՆ 1887 ՅՈՒՆԻՍ 20

Առժամանակեայ կեդրոնատեղի Թաթլը Խուլուսի մահուտ կուլիպէն

Ընկերութեան վերջին ընդհ. ժողովոյ մէջ նախագահ Կարճ էֆէն-տի Պօտուռեանի կողմանէ ի գիր առ-նում հետեւեալ կանոնները մեծա-գոյն մասին հաւանութեամբ կըն-դունուին :

Ա. Ընկերութեան նպատակն է պարելու արհեստը ազգիս մէջ ծա-ւալել :

Բ. Ընկերութիւնն ազատ է ի Թաթլը Խուլուսի մահուտ կուլիպէն կամ մանտաւն և կամ վերջապէս ի բն յարմար գտած որահը կամ լե-րան գլուխը պարել, բաւական է որ անյորդար գետին մը չըլլայ :

Գ. Եթէ ընկերութիւնս իր կեդ-րոնատեղին դրացեայ դատարա-զութեամբ վաճառու կամ հաւածուի մինչեւ իսկ Օգոստոսի լերան դա-գաթը ելլելով իւր պարելը շարու-նակելը իրեն պարտք համարած է :

Դ. Ընկերութիւնս Ուզուն չար-չըլի չխուլիսներէն երկու երեք զոյգ ճամպաղի նալըներ շինել պի-տի տայ սրպէս զի արտաքոյ կարգի կարճ հասակ ունեցողները արտաքոյ կարգի երկայնահասակներուն հետ պարած տառնին ոտքերնին և հա-սակնին հաւասար դայ, ապա թէ ոչ բնական է որ կարճահասակ պարողին գլուխը երկայնահասակին աջ թեւին տակը կ'մտնայ :

Իւրաքանչիւր ընկեր շաբաթը 20ական վարայ տուրք մը պիտի տայ, որմէ գոյանակը գումարով քանի մը հատ բէքներ պիտի շին-ուին պարողաց յոգնութիւն առնել տայ ծառայելու համար :

Զ. Պարելու սկզբնաւորութեան միջոցին պիտեբու տամաներու և քա-վալիէններու ընտրութեան համար անպատճառ խըռ մը պիտի ելլայ, ասիկայ հնաւանդ և նուիրական կա-նոն մի է, որոյ ամեն ընկերք հնա-զանդելու են :

Է. Պարելու դասերը երեք կարգի բաժնուած են, որ ըսել է թէ՛ աչա-կերտ մը երեք ամիսէն պիտի կրնայ ամբողջ պարերը սովորել. իւրաքան-չիւր կարգին շրջանը մէկ ամիս է :

Ը. Հետեւեալ բանը անփոփոխ է մինչեւ երեք ամիս :

Ա. ԴԱՍ

Ուսուցիչ, երկայնապահ Էֆէն-տի :

Բօքքա, բօքքա մաղուրքա, սօ-թիօ : վալի ալմանտ, ֆրանսէզ, լանսիէ, գատրիլ :

Բ. ԴԱՍ

Ռոֆէսէօն Նիգօլարի էղաճի-թիս :

Բօքքա միլանէզ, բօքքա դալօնէ, բօքքա մաղուրքա, միլանէզ, մա-ղուրքա սօթէ, մաղուրքա բաթի բօ-սօթիս ալէք վալս ֆրանսէզ. նուլօ սօթիս սօթէ :

Գ. ԴԱՍ

Գումանտաթէօն Կարճուկ էֆի-Պօտուռօֆ :

Սօթիս տն տիվէռս ֆիկառ :

Վալսօփիան :

Կայօփ, կապուկեան, մաղուր-քա ալա ռուս, վալս ալման տուպ-լէ. վալս սօթէ, գատրիլ իմէրիտլ, քօթիլիօն, սօյ :

Թ. Ուսուցիչ էֆէնտիները նախ այս պարերուն անունները և ձեւերը պիտի սովորին և ապա աշակերտաց սովորեցնեն :

Ժ. Չարդոյ ընկերք կամ յոգ-նութիւն առնել ուղղութեամբ պարտա-ւոր են խաղին եղանակը երգել մին-չեւ որ շունչերնին հատնին :

ԺԱ. Լակիճի Տավիշօնի պարտքն է ընկերութեան կողմանէ արուելը 3 դահեկան շաբաթականով պարո-ղաց պատուտելիք ոտամանները կարկտել :

ԺԲ. Արտաքոյ կարգի անձինք կրնան ընդունուիլ ի պարտօրահն յա-տուկ մեւաքով մը. այս մեւաքերէն հաւաքեալ ստակը քրտնոգներուն խառնախալտի շրոյն և ապագային մեջ վարձուելիք լաթէռնային վար-ձուն համար պիտի դորձածուի :

ՍՈՒՐ

ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ

(Շարունակութիւն և վերջ)

— Տիւնեա գաղան պէն քէքճէ օլտուճ, ֆաղըր գօլումուն պիւր չա-րէսինի պուլամատը, տուրուպ սէն նէ՛ սէօյլէօրսուն, Ստամպուլաա պու-լունան քըրքըրլարն հէփսինէ տէ գօլումուն պաղլաթտըճ ամա նաֆի-լէ, հիչ պիւր ֆայտէսինի կէօրէմէտիմ :

— Նէ՛ չարուգ ունութտուն, օն իքիչեր փարատան երիմի թանէ-սինէ ալթըր դուրուչ վէրմէտիմ մի, սէօյլէ, շիմտի պունլարը գաչաճ բա-րատան սայաճագսըն :

— Պու գատարընա տա շիւքիւր, էվէլտէն պու բարմագլարըմը հիչ օյնատամաղ ըտըմ, Ալլահ իշինի դա-եըսըն, գատընըն պիւրի պանա պիւր ուֆագ շիչէ եաղ վէրտի, պիւր գաչ տէֆա սիւրտլ շիմտէ պաչլաաը բար-մագլար օյնամաղ :

— Նաֆիլէ կիւրլիլիւ իստէ-մէզ, պունտան էվէլ ալտըգլարըմըն եէրինէ թամ գըրգ թանէ վէրէճէք-սին պանա, զէրէ պունլար օնլարըն ետըսըր գատար տըր, չարուգ պաչ-լա սայմաա, իշիմ վար, սօքաղա չը-գաճագըմ :

— Ճանըմ, պըլտըր գըլըն դալ-դալաթ քիւֆէսի սըրթըմտա իսկէ-լէյէ կիւէր իքէն այաղըմ գայտը, երկիւ գօյու գաւանտըմ իշտէ սէ-պէպ պու, գօլումուն ինճիթմիշիլ :

— Աճապա նէտէ՛ն աճը օլուր, տէրլէր քի քէօքիւնէ պասարլար տէ օնուն իշին աճըլանըր, սիդտէ պա-մանըն, էֆէնտիմ, միւշթէրի տիյնէճ մի, տէ պագալըմ, գըրգ թանէ խը-եար սայ պանա, ալնատը՛ն մը :

— Ալնատը՛մ, վէղիւր խանընտա օթուրան գըրըգլար իշին տէմէ՛սին :

— Նէ՛, վէրմէզմիսին, սէպէ՛պ :

— Կիթտիմ, օրայա տա կիթտիմ, ֆագաթ պիւր շէյճիկ ետրամատըր, նաֆիլէ եէրէ փարան չօդ իսէ վէ՛ր, պրագ, գարտաչ, քիւլ օլտում պու գօլուն սէպէպինաէն :

— Կէչէն ազլամ քիւլիւկ օղ-լում չարչըտան կէթիւրմիշ իտի, շէ-քէր կիպի թաթլը, աճըլարը մահալ-լէլէրտէ՛ սիւրմէյէ պագալսընըր, սաթըճը տէյի՛լ մի սինիլ, հէփինիլ-տէ եէրինիլտէ գալաաընըր :

— Հայ, հայ, Ալլահըն ինայէ-թի պէօյիւք, համտ օլտուն, շիմտիյէ-տէք աճ գալմատըր, պունտան պէօյ-լէ տէ մէվլա քէրիմ, ճան սաղլըր օլտուն :

— Եօյլէսի տէյիլ, դուգում, ճէփիլին օն թանէսի պիւր աճէյէ-ամա՛ եէնիլմէսի առամըն կիւճիւնէ կիտէր, չարուգ թարաֆընտան սայ պագալըմ շունտան գըրգ թանէ շէյ, զէրէ էվէրիւր պու գատարը :

— Տիւարըր իւաճընը տա ետր-տըր, ֆայտէ էթմէտի, հաւըլը քէ-լամ, դարտաչ, արթըգ օսանտըմ, սայլ վէրտիմ եագասընը : Խըյար ա-լաճագ մըսըն :

— Սայսանա պէ՛, պուապ Ամ-բակում աղան այնպիսի բարձր ճայ-նով որ ըսելի եղաւ պարտիզպանին և սա սիսեց համըն :

— Սիլին կիպի առամլարըն հագընտան պէօյլէլիլէ կէլինիլը, ը-սաւ Ամբակում աղան, համըն աճ վա-րունկները մէկզի դնելով, և պար-տիզպանը դունէն դուրս ընելու պատ-րաստուելով :

— Չէյլէկ վէրսէն գօլայ ամա՛ մէճիտիյէ պօղամամ, ուֆագըղըն եօգ իսէ տուրսուն, ետըն վէր օ պիւր կիւն վէր, սէնտէ ալաճագըմ օլտուն :

— Ալլահ հայըլը բագար վէր-սին, ըսաւ Ամբակում աղան, օգնե-լով միանգամայն պարտիզպանին կո-

շարժում ազդելու և գումար, կտրել, ցույցներն ու գործը ներշնչելու :

Ո՛վ պէտք է գլուխ կանգնի ու ներշնչէ, ո՛վ պէտք է կողմէ նպատակաւոր Յանձնաժողովը. — անշուշտ Ամեն. Ս. Պատրիարքն և Ազգ. վարչութիւնն, որ Աստուծոյ առաջ, Ազգին առաջ և մարդկութեան առաջ մեծ ու ահեղ պարտականութիւն ունին, որովհետեւ նորա կոչուած են տնօրինել ոչ միայն ազգային ընթացիկ ու այլ գործերն, այլ և խնամել ժողովուրդին ի նեղութեան և ի տառապանս :

Եւ միթէ ի գաւառս սովեալ ժողովուրդն արժանի չէ՞ ազգային ընդհանուր հոգածութեան, զթոյ և կարեկցութեան :

Անշուշտ արժանի է ոչ միայն անոր համար որ ազգային մարմնոյան, դամէ, այլ մանաւանդ անոր համար որ իր պարտականութեան թան մ'ալ աւելի կը կատարէ, այն դաւառացի ժողովուրդը կը սնէ, որ իր զաւառի ազգային պիտոյից մասնակցելէ դատ՝ կը վճարէ նաեւ կեդրոնին համար հաշտութեան տուրք և երուսաղէմայ 40.000 ոսկի պարտք :

Ուրեմն ո՛րքան աւելի կը ծանրանայ մեր պարտականութիւն հանդէպ դաւառացի սովեալ ժողովուրդեան :

Տրամաբանելու հարկ չկայ, զի խնդիրը պարզ է և դիւրեւորելի :

Բայց ուրիշ կարեւոր նկատողութիւն մ'ալ կայ անյապաղ օգնութեան հասնելու համար :

Վերջինից թուով ըսինք և այժմ վերստին կը կրկնենք թէ բարոյական մեծ վտանգ մ'ալ կայ, զոր պարտի Պատկ. կրօնական ժողովը լուրջ ուշադրութեան առնուի :

Ամերիկացի Միսիոնարք օգնութեան միջոցներ ձեռք առած են ձիգութիւնք ալ ի հարկէ անտարբեր չեն դռնուիր, որովհետեւ առիթն օգուտ քաղելու, այն է, ժողովուրդեան համակրութիւնը շահելու ժամանակ է :

Երբ վտանգն վերահաս չէ, անհոգ ու անտարբեր կը մնանք, այլ երբ վտանգն հասնի, ինչ կընենք. — կսկիւնք աղմուկ և վիվլուկ յարուցանել, դուռն ու պուշտել թէ ձիգութիւնք սանկ կընեն, Միսիոնարք նանկ կընեն, իբր թէ ոյդ ազադակներ ու դռնում գոչումներ միջոցներ ըլլային Հայաստանեայց եկեղեցին պահպանելու և ժողովուրդն հոգեւորապէս ու բարոյապէս և ի հարկին նիւթապէս միմիարելու :

Ձիգութիւնք և Միսիոնարք իրենց պարարը կը կատարեն, զի ասոնք մարդորութեան պաշտօն ունին :

Մեր եկեղեցական Ս. Հարք ալ գոնէ իրենց ժողովուրդը պահպանելու և պաշտպանելու նուիրական պարտականութիւնը պէտք չէ՞ ունենան :

Այսպիսի հարցում մ'աւելորդելով է :

Ժամէ արդ ուրեմն որ Ամեն. Ս. Պատրիարքն և Պատկ. կրօնական ժողովը — որ համակրութիւն կը վայելեն — չարժին, եթէ արդէն չեն շարժած :

ՎԱՐՇԱՎԵՏԱՅ ԱՊՍԴԱՆ

Ս.

Վարժապետաց ներկան բարելաւելու և աղագան անդորրելու ըսկզբունքը 27 տարիէ ի վեր դրուած է Սահմանադրութեան մէջ, սակայն այդ սկզբունքը դործնականապէս ոչինչ արտադրած է :

Այլ միթէ յանցանքը սկզբունքին է, որ մինչև ցարդ իբր մեռեալ տառամացած է, թէ այն անձնաւորութեան որ ազգային վարչութեան ղեկն ի ձեռն ունեցած էին :

Սկզբունքներն, — ինչպէս և օրէնք — ինքնին դորութիւն չեն ունենար, եթէ զայնս գործադրելու կարող ձեռքեր չգտնուին պաշտօնի վրայ :

Լաւ սկզբունքներն ու լաւ օրէնքներն անոնք չեն որ թուղթի վրայ դրուած կը մնան, այլ անոնք են որ կը գործադրուին :

Վարժապետաց ներկան բարելաւելու և աղագան անդորրելու կենսական պէտք մ'է, զի Վարժապետք ազգային յառաջդիմութեան բանաորներն ու անխոնջ մշակներն են :

Եթէ վարժապետք լաւ չ'անանին, եթէ կարօտ վիճակի մէջ գտնուին, եթէ օրքստօրէական պէտքերու վրայ մտածեն, եթէ պարտ ու պատշաճ յարգանքը չի վայելին և եթէ ապագայ չունենան, ոչ Վարժապետութիւնը կ'ստանայ զիւր կատարելագործութիւն և ոչ ազգային յառաջդիմութիւն կոչուած բանը նշանակութիւն կ'ունենայ :

Փոխանակ հարցնելու թէ Վարժապետութիւնն ինչու չբարձրանար, պէտք է հարցնել թէ՞ Վարժապետաց ներկան ինչու չբարելաւանար և ապագան անդորրի :

Այս է խնդիրը, որ լուծումը սակայն պէտք չէ որոնել այն սկզբունքներն մէջ՝ որ կայ ի Սահմանադրութեան, այլ ազգային այն մարմնոյ գործողը մէջ, որ կոչուած է Վահմանադրութիւնն գործադրելու :

Սահմանադրական Վարչութիւն ըսելով կը հասկցուի այն Վարչութիւնը որ Սահմանադրութեամբ որոշմադրեալ սկզբունքները կ'իրականացնէ :

Սոյն նուիրական պարտականութիւն կատարելու համար Վարչութիւն մը պարտի ունենալ հաստատուն կամք, գործունէութիւն և բարեյօժարութիւն :

Երբ Վարչութիւն մ'օժտեալ է նոյն յատկութեամբ, ամենէ օգտակար Վարչութիւնն կը լինի, որ փառաւորեալ է իր ազգօգուտ գործերով և արժանի ժողովրդային համարման :

Իսկ այն Վարչութիւն որ կըրտաղի զրեթէ միայն ընթացիկ գործոց կարգադրութեամբ, ոչինչ բրած կը լինի Սահմանադրութեան համար և ոչինչ ազգային յառաջդիմութեան համար :

Օգտակար Վարչութիւնն այն է որ մղում կուտայ դնահատելի դործերով, զարկ և ցունց կուտայ կենսական խնդրոց լուծմամբ, և շարժում ու ոգեւորութիւն կը ներշնչէ ազգասիրութեան ոգին ազգայնոց սրտին մէջ արծարծելով իւր այնպիսի գործով որ իրմէ պահանջելի են :

Ուրեմն չկրնար ըսուիլ թէ վարչական պաշտօնն չ'որ ու ցամաք պաշտօնն է :

Բնդհակառակը՝ փայլուն պաշտօնն է այն անձանց համար որ փորձառութեան և վարչական հմտութեան հետ ունին միանգամայն աշխոյժ, եռանդ և կարողութիւն :

Արդի Վարչութիւնն եթէ ունեցած է քննադատելի դործեր, ունեցած է սակայն դնահատելի դործեր ալ, ինչպէս ունեցած են իւր Ուսումնական և Տնտեսական Խորհուրդներն, որոց առաջինը Վարժապետաց վկայականի խնդիրն առաջին անգամ ըլլալով գործադրեց և այժմ կըրաղի Վարժապետաց ներկան բարելաւելու և աղագան անդորրելու կենսական խնդիրը լուծելու, որ իւր և Ս. Ազգ. Վարչութեան գլուխ գործողը պիտի ըլլայ ճիշդ այն տեսութեամբ, զոր բացատրեցինք :

Վարժապետաց ներկան կը բարելաւի, եթէ իւրաքանչիւրին արժանեաց, կարողութեան, աշխատութեան և արդիւնքին համեմատ ամուրթոյակ յատկանայ, ճիշդ ժամանակին վճարուի, նմա պարտ ու պատշաճ յարգանքն ընծայուի, ազդեցութեան, այն է, Խաբէ համար պաշտօնէ չլրկուի և իւր ու ընտանեաց օրապահիկին վրայ չմտածէ, այլ պատրաստուած մանայ դառաւ և իւր մտածման միակ առարկան ըլլայ իւր ճիւղին մէջ յառաջդիմութիւն :

Սոյն տրամադրութիւնք պէտք է պարտաւորել լինին ամեն տեղ և ամեն Թաղ. Խորհրդոց համար և

զորս չգործադրողն ճշմարտիւ պատասխանատու ճանչցուի :

Կան թագ. Խորհուրդներ որ նիւթական եկեղեցւոյ պայծառութեան համար ձէլմն ու մոմը ժամանակին կը գնեն , բայց Վարժապետի ամսականը չեն ուզեր ամիսներով վճարել և կարծես հաճոյք կըզգան որ իրենց գիմուսներ ու աղաչանքներ ընեն գէթ Խորհուրդ մը ըստանալու և կամ յոյժ կենսական պէտք մը հոգալու համար , (1) այն վարժապետը , որ բարոյական եկեղեցւոյ անխնայ մշակն և աղջային յառաջդիմութեան բաղմոյսաւ բանւորն է :

Աւելորդ է խորհիլ թէ նոյն Վարժապետն ինչ սիրտ , ինչ եռանդ և ո՞րպիսի փափագ կունենայ սրտի մոռք ծառայելու և իւր ճիւղը մը չափելու :

Եթէ մարդ փոխանակ Վարժապետութիւն — ինչպէս նաեւ Խորհրդութիւն և Հեղինակութիւն ընելու , դարձնութիւն ընէ , գոնէ ապահով կըլլայ թէ իւր աշխատութեամբ կրնայ իւր ողբապահին հայրապետի ուսման ու խնամքի մը տէր ըլլալ :

Վարժապետն ինչո՞ւ չկրնայ հանգիստ ապրիլ և գոնէ տունի մը տէր ըլլալու ապահովութիւնը չունենալ , քանի որ իր աշխատութիւն Սղդին և նորա աղազային համար է :

Սիմոն Կաթողիկոս աստի իրը 130 տարի առաջ կը գրէր առ Կ. Պօլսոյ Պատրիարքն թէ մի' ջանաք միայն նիւթական եկեղեցւոյ պայծառութեան համար , այլ հոգ տարէք աւելի բարոյական եկեղեցւոյ զարգացմանը :

Բայց ինչ ըսել այն թագ. Խորհրդականին՝ որ ինք հազիւ թէ ամիսն 500 զրշ. կը չահի և խեղճ Վարժապետին 500 զրշ. ամսականը մեծ կը տեսնէ . կամ այն թագ. Խորհրդականին՝ որ իր պաշտօնի անունովը փառաւորութիւն յաւակնութիւն ունի՝ դիտնալ կարծելով թէ Վարժապետն ալ խեղճ ժամակնային նշման իր ներկայութեանը բարեւ ընելու և սիկարային կրակ տալու պարտականութիւն ունի , և կամ թէ Վարժապետն իւր ամսականաց իբր թերհաշիւ քանի մը զրշ. ստանալու համար պարտաւոր է քանի' քանիցս աղաչել , պաղատիլ և իւր իրաւունքն իբր չնորհ խնդրել :

(1) Երբ ստոյգ կը պատմուի թէ Վարժապետ մը իւր կնոջ ծննդաբերութեան առթիւ բազում աղաչանքներէ ու պաղատանքներէ յետոյ հաղիւ թէ մէ՛կտ մը կընդունի նոյն օր :

Միթէ այսպիսի միջոցներով աղգային յառաջդիմութիւն տեղի պիտի ունենայ :

Ինչ ողբալի վիճակ :

Ստուգիւ հրաշք մը պէտք է համարիլ որ այսպիսի պայմանաց մէջ տակաւին կան Վարժապետութեան փափաքողներ , որ յանձն կառնուն կամաւոր նահատակութիւն :

Ի հարկէ լքանելու և վհատելու ջրներու համար չենք գրեր այս տողեր , այլ բարեոքելու և բարելաւելու համար վիճակն Վարժապետաց , որ ձուլիչներն են աղգային յառաջդիմութեան :

Անշուշտ Աղգ. Վարչութեան պարտքն է վերջ տալ վիճակի մը , որ տխրեցուցիչ և յուսահատական է :

ՊԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆՔ

Պանդուխտ աղգայինք՝ որ ընդհանրապէս զուրկ են կանոնաւոր կեանքի պայմաններէ , այն է , հակառակ մարմնական չարաչար աշխատութեան՝ կը բնականին կեղտոտ և խոնաւ տեղեր ու կրնադունին ամենափառ տեսակէ մոռնող , եւ չեն վայելեր ընտանեկան քաղցր գորով ու մխթարութիւն , եւ կը մատնուին երբեմն մոլութեանց , եմթակայ կը լինին շատ անգամ խիստ փառաւոր հիւանդութեանց :

Երանի՜ թէ հիւանդացողներուն շուրջը գտնուէին բարեզգած անձինք որ անմիջապէս առաջնորդէին զայնս ի Հիւանդանոց , ուր դարմանուէին ինամով :

Այսպէս չեն վարուիր . այլ ընդհակառակը կը թողուն զանոնք իրենց բաղդին , եւ երբ սաստկանայ նոցա հիւանդութիւն և մահուան վիճակի հասնի , իրար կանցնին , Հիւանդանոց փոխադրելու ճար կը խորհին եւ 20 զրշ. մուտքի դրամը չանելու համար զանազան միջոցներու կը գիմեն , եւ ուր հասնելէ յետոյ խեղճ հիւանդները կամ անմիջապէս եւ կամ քիչ ատենէ կը մեռնին , զի շատ ուշ տարուած են անդ :

Եթէ ժամանակին Հիւանդանոց փոխադրեն հիւանդացեալները , ուրով կընդունուին անդ , ինամով կը դարմանուին , կը լաւանան ու կառողջանան , որով խեղճերը կազատին անբնական մահուան ճիւղաներէ ու հետեւաբար Աղգին առոյգ ու կայտառ մասը չխափիր ու չփնտրար :

Բայց ո՞վ պիտի խորհի , ո՞վ պիտի խղճայ , ո՞վ կարեկցի եւ ո՞վ դարման տանի սոյն աղետից ,

Արդեօք հիւանդացեալներու շուրջը գտնուողները :

Սակայն անոնք դադարաւոր անգամ չունին , զի տգէտ ու նախապաշարեալ են :

Սենեկապետները . — Ա՛հ , ինչ ըսենք , կան ստոյն մէջ այնպիսիներ , որ խեղճ հիւանդացեալներու դժբաղդութեան օգուտ քաղելու միջոցներուն վրայ կը խորհին , որովհետեւ — հաւաստի կեր-

պիւ կը պատմուի թէ — նոյնպիսի անխիղճներ ճիշդ այն պահուն Հիւանդանոց փոխադրելը կը մտաբերեն , երբ հիւանդն օրհասական վիճակի մէջ կը գտնուի , որպէս զի յետ մահուան՝ իւրացնեն նորա գոյքն ու դրամը , եթէ ունի :

Ինչ սոսկալի անխղճութիւն :

Անշուշտ դարման պէտք է բառնալու համար դոյս մեծ աղետ , զայս չարիք :

Առաջին միջոցն է հրաւիրել պանդուխտ աղգայիններն որ անմիջապէս եւ ուղղակի Հիւանդանոց երթան առանց ուրիշի միջնորդութեանը գիմելու , երբ հիւանդանան :

Այս հրաւեր քանիցս կարդացած է Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնը , սակայն դժբաղդաբար գրեթէ անսելի մնացած է :

Կայ երկրորդ միջոց մ'ալ , որ պէտք է վերաբերի մանաւանդ կարող պանդուխտներու , այն է , կազմել Ընկերութիւն մը որ պաշտօն ունենայ չրջիլ խաներն ու պանդոկները հսկելու եւ անմիջապէս ի Հիւանդանոց փոխադրելու համար հիւանդացեալները :

Մի այսպիսի Ընկերութիւն — ինչ անուն կուզեն թող տան — ստուգիւ նախախնամական պաշտօն կը կատարէ , որովհետեւ պիտի աղատէ կեանքն այն բաղմոյսը զժաղողներու՝ որ հայր , մայր , կին ու զաւակներ ունին , եւ ինքեանք նոցա նեցուկներն ու պաշտպաններն են :

Անշուշտ Աղգն եւ Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնն ալ մեծապէս գոհ պիտի լինին նոյնպիսի Ընկերութեան մը աշխատութիւններէ , որ ոչ նուազ գովելի է :

Ի ՆԻԿՈՄԻԴԻԱ

Անցեալ շաբթու մի քանի օր անցուցինք ի Նիկոմիդիա :

Անցեալ տարի Գեր. Ս. Առաջնորդին եւ Արմաշու Գեր. Վանահօր ու բաժանալ Կուսակցութեանց միջեւ կատարուած հաշտութիւնն սկսած է ցոյց տալ իւր բարեյաջող արդիւնքներ :

Դպրոցի վիճակն այս տարի աւելի գոհացուցիչ է եւ տեղւոյն բարեջան Թագ. Խորհուրդն եւ Հոգաբարձութիւնն արժանի գոհունակութեան իւրեանց տածած մասնաւոր հոգածութեան եւ անդու ջանիցն համար :

Մեծ. Յ. Պէյաղեան էֆէնտի յատուկ շնորհակալաց արժանի է , որ աշխատութեան գեղեցիկ արդիւնքներ ակնբեր կը փայլին :

Գեր. Ս. Առաջնորդն Եալովա կը գլուխուէր , ուր կաշխատի աղբիւրի մը շինութեան գործով :

Նիկոմիդիոյ կառավարիչն՝ Վսեմ Սըրրի փաշա յոյժ գործունեայ անձ մ'է , որ բնաւ չդադրի հոգածութիւն նուիրելէ ճանապարհաց շինութեան համար :

Սակայն այս պատճառաւ ժողովուրդը ըստ բուականին կը տաքնապի , որովհետեւ հնձոց եղանակ է :